ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ mayor@yerevan.am

N 01/38-33422-h

«17» 04 2020 թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջանջուղազյան,

Ի լրումն 2020 թվականի մարտի 31-ի թիվ 01/38-33422-h գրության, խնդրում եմ, որպես «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2015 թվականի հոկտեմբերի 16-ին ստորագրված «Երևանի կոշտ թափոնների – փուլ 1» ֆինանսական պայմանագրի թիվ 1 փոփոխության» նախագծի ստորագրման վերաբերյալ տեղեկանք/հիմնավորում ընդունել կից ներկայացվածը:

Առդիր՝ 1 (մեկ) թերթ:

Հարգանքով՝

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատ.՝ Ն.Մարտիրոսյան
Հեռ.՝ 52-09-73

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՒՏ N 14911
4 «20» 04 2020 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Համաձայն «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև 2015թ.-ի հոկտեմբերի 16-ին կնքված վարկային պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր)՝ վարկային միջոցների հասանելության ժամկետը սահմանված էր 2019թ-ի հոկտեմբերի 16-ը:

Հաշվի առնելով մեր կանխատեսումները, որ նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրերի փակման շինարարական աշխատանքները կմեկնարկեն 2021թ.-ին և կտևեն մոտ երկու տարի, որին կհաջորդեն թերությունների վերացման աշխատանքները՝ Երևանի քաղաքապետարանը, որպես Ծրագրի իրականացման ավարտման վերջնաժամկետ է դիտարկում 2023թ-ի դեկտեմբերի 31-ը:

Հետևաբար, հասանելիության ժակմետների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը դրական է:

Ինչ վերաբերում է Պայմանագրից <Բաղադրիչ III>-ի հանելուն, նշենք որ Եվրոպական Ներդրումային Բանկը Պայմանագրով հաստատել է <Բաղադրիչ I>-ի շրջանակներում ֆինանսավորման հատկացումը, իսկ <Բաղադրիչ III>-ը ենթադրում է հավելյալ վարկային պարտավորությունների ստանձնում: Հաշվի առնելով առկա վարկային միջոցների ներգրավման սահմանափակումները, Երևանի քաղաքապետարանը չի առարկում Բաղադրիչ III-ը Ծրագրից հանելուն: Միաժամանակ նշենք, որ Երևան համայնքը դիտարկում է աղբի սորտավորումն ու վերամշակումը համայնք-մասնավոր համագործակցության ձևաչափով իրականացնելու հնարավորությունը: